

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վնասված գիւղերը.—Ներքին Տնտեսութիւն.
Երկրաշարժի, երկրաշարժից վնասվածների օգ-
տին. Աղէտի չըջանից. Երկրաշարժի Շահա-
խում. Նամակ Տաշկենտից. Նամակ խմբագրու-
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն. Լորդ Դիւֆֆերին մահը. Արտաքին
լուրեր.—ՀԵՆԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐՆ:

ՎՆԱՍՎԱԾ ԳԻՒԼՆԵՐԸ

Այն տեղեկութիւնները, որ ստանում
ենք Շահախում երկրաշարժի շրջանից, ցոյց
են տալիս, որ նպաստամատուց մասնաժո-
ղութիւնը գործունէութիւնը պէտք է աւելի
լայն ծաւալ ստանայ, քան մինչեւ այժմ
եղել է: Շատ գիւղեր բոլորովին քանդվել
են եւ փրկատակների տակ կորցրել են իրանց
ամբողջ գոթը: Մեր թղթակիցը գրադրած
է տեղեկութիւններ ժողովելով գիւղերի
մասին: Այսօրվայ համարում նա հաղոր-
դում է այն, ինչ որ պարզվել է մինչեւ
այժմ:

Գիւղերի մասին մի քանի տեղեկու-
թիւններ ժողովել է Արսէն վարդապետ
Ղլթեան, որ գնացել էր Շահախից այցե-
լու երկրաշարժից վնասված տեղերը: Նա
Շահախուց եկել է Թիֆլիս երկու օրով,
նորից պէտք է վերադառնայ Շահախի եւ
այնտեղ մնալ մի քանի շաբաթ՝ մասնակցե-
լու նպաստամատուց մասնաժողովի գործե-
րին: Նա ընտրված է Բագուի գլխավոր
մասնաժողովի կողմից իբրեւ երկրաշարժից
վնասված հայ գիւղական ազգաբնակչու-
թեան ներկայացուցիչ: Մենք առիթ ունե-
ցանք խօսելու նրա հետ երկրաշարժից
վնասված տեղերի կարիքների մասին եւ
ստանալ լրացուցիչ տեղեկութիւններ:

Այցելած գիւղերը հետեւեալներն են.
Մարասա, Բերքեն, Մէյսարի, Միրիշեն,
Ալաբէյու եւ Խնարի հայ եւ թուրք գիւ-
ղերը: Այդ գիւղերում մարդ չէ վնասվել,
բայց քանդվել է տների մեծ մասը եւ
փրկատակների տակ մնացել են ուտելիքէն
պաշարները, այնպէս որ մեծ կարիք է
զգացվում աշխարհ:

Բերքենը հայ գիւղում վնասվել են բո-
լոր 230 տները եւ եկեղեցին: Մարասա
հայ գիւղում 680 տնից բոլորովին քանդ-
վել են 75 տուն, վնասվել է մնացածների
կէսը եւ դարձել անբնակ, միւս կէսը թե-
թե նորոգութեամբ կարող է վերականգն-
վել: Զանդվել է նաեւ ուսումնարանը: Մէյ-
սարի հայ գիւղում քանդվել են բոլոր 80
տները, նորաշէն եկեղեցին ստացել է մեծ
ձեղքումներ: Միրիշենում, ուր կային
18 հայ եւ 16 թուրք տներ, վնասվել են
բոլորը, բայց մի քանիսը կարող են հնչ-
ուութեամբ նորոգվել: Սաղիանի վանքը
մնացել է անվնաս. իսկ տների այն կէսը,
որ գտնվում է փուխի հողի վրա, քանդ-
վել է. զարոցի շինութիւնը նոյնպէս քանդ-
վել է: Վերին Խնարի թուրք գիւղում
վնասվել են գիւղի բոլոր 34 տները, մնացել է
կանգուն միայն մզկիթը: Ալաբէյու թուրք
գիւղում վնասվել են բոլոր 8 տները:

Նպաստները տրված են շատ չնչին քա-
նակութեամբ. բայց դրանք նախնական
փաւորութիւն ունեն: Բերքենը գիւղին
տրված է 100 ռուբլի, Մարասային 116
ր., Մէյսարին 60 ր., Միրիշենին 25 ր.,
Ալաբէյուին 5 ր., Խնարիին 15 ռուբլի:
Նպատուութիւնը շատ մեծ է եւ պէտք է
հոգացվի մասնաժողովի կողմից: Վերադառ-
նին Արսէն վարդապետը մտադիր է այցե-
լել եւ միւս գիւղերը, կազմել վնասվածների
վիճակագրութիւնը եւ կազմել կարօտեալ-
ների ցուցակը:

Ընդհանուր կարծիքը այժմ այն է, որ
շուտով ազգաբնակչութիւնը կապահովվի
անկողին եւ հագուստեղէնի կողմից, որով-

հետեւ դրանք ստացվում են զանազան
տեղերից եւ բացի այդ ազգաբնակչութեան
մի մասին աջակցել է փրկատակների տակից
հանել անկողիններ եւ շորեր: Այժմ գլխա-
ւոր օգնութեան ձեւը պէտք է լինի դրա-
մով եւ աշխարհով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ե Ր Կ Ր Ա Շ Ա Ր Ժ Ը

Հ ե ո ա գ ի Ր Ն Ե Ր
(Մեր թղթակիցից)

Շահախի, փետրվարի 10-ին. Երէկ չորս,
այսօր երկու տատանումներ տեղի ունեցան.
Գաղթականութիւնը, պեղումները շարունակ-
վում են. իններորդ օրը հանցին մի փոքրիկ
աղբիկ եւ ձիւր Բասակ գիւղում սպանված են
ուշ հոգի. քանդվել են 142 տուն: Գիւղացի-
ները հացի մեծ կարօտութիւն ունեն: Գաւա-
ռական կօմիտեւը վճելից իրենց օգնելը փո-
խարինել փողով. նա միջնորդում է, որ իր
կարգադրութեան յանձնվին Թագաւոր Կայսրի
նուիրած 50,000 ռուբլին: Բիշկէկից հաչում,
քաղաքում սպանվածների թիւը 900 է:

Շահախի, փետրվարի 10-ին. Իշխան-կա-
ռավարչապետը հասաւ Շահախի ժամը 1-ին:

ՇԱՄԱԽԻՑ ԻՆՏ ԳՐՈՒՄ ԵՆ. «Բագուից եկել
են մի քանի պարոններ եւ բժիշկներ զանազան
գանձարարութիւններով. կազմակերպված է
զաւառական յանձնաժողով վնասվածներին օգնե-
լու: Բագուից հաչում են համար Բագու-
ից ստացվել է 50 ձեռք անկողին պ. Ասլա-
նեանից, իսկ Յակը Աղաւանից այսօր ստաց-
վեց ու բաժանվեց 123 պուշ հաց. զանազան
բարեգործներից ստացվել է ալիւր, բրինձ, թէյ,
հագուստ եւ շաքար: Այսօր, ամսիս 5-ին, եր-
կիր խաղաղ է, մէկ անգամ է ցնցվել: Հայ
գիւղացիները կարելոյն չափ նիւթապէս եւ
բարոյապէս օգնում են քաղաքացիներին, չը
նայած որ իրանք էլ վնասված են: Մի քանի
թուրք գիւղեր սաստիկ կորուստներ են ու-
նեցել:

Բագուից մեզ գրում են. «Յագուտ Շահա-
խում վնասվածների Բագուում օր ըստ օրէ նու-
րատուութիւնների քանակութիւնը մեծ արագու-
թեամբ աճում եւ բազմանում է: Ամեն կողմից
վերահասու եւ խնամող անձանց թիւը չա-
տանում եւ մեծ ծաւալ է ստանում: Գաղաքի
համարեա բոլոր խանութները քնած առեւտու-
րը այժմ կենդանացել է եւ աւելի, քան աղը
դրութեան մէջ է: Ամեն մէկը պարտք է համա-
րում Շահախում եւ նրա շրջակայ գիւղերում
կենդանի մնացած, կամ, ճիշդն ասած, կիսամե-
ղաքած մերկ մարմինները չորեքով ծածկել եւ
նրանց հաց ուտեցնել: Այդ դժբաղդներին հագու-
ստեղէն եւ ուտեստ հասցնելու համար ամեն
օր խանութներից կրում են թոփերով չթեղէն
ապրանք եւ պուզերով մթերք: Առաւօտից մին-
չեւ երեկոյ անընդհատ բերում եւ լցնում են
այդ նուիրատուութիւններով Հայոց Մարդաբ-
րական ընկերութեան, «Կաւմ» խմբագրու-
թեան եւ մի քանի ուրիշ հիմնարկութիւնների
գաւթիթները: Նուիրատուութիւնների մէջ յիշա-
տակութեան արժանի է մեր նկարիչ պ. Ա. Մե-
լիք-Շահախադարեանի նուիրած իւզանկար պատ-
կերը, որը ներկայացնում է Անիի պարիսպնե-
րը եւ նրա գլխավոր մուտքը: Իսկ տիկին Մե-
լիք-Շահախադարեանը նոյն նպատակին յատկա-
րեց մետաքսի վրա նկարած իր ընտիր աշխա-
տութիւններից երկու հատ: Մեծ համակրու-
թեան արժանի է Բագուի հասարակութեան հա-
սարակ դասակարգը, որը իր անկեղծ ցաւակցու-
թեամբ միշտ կարեկից է հանդիսանում այս-
պիսի տխուր դէպքերում:

Բագուից մեզ գրում են. «Երկրաշարժի
արհաւիրքը այնպիսի սարսեցնող ազդեցութիւն
է արել այստեղ, մեզ մօտ, Սպիտակ քաղաքում,
որ բոլորի խօսակցութեան նիւթը հենց այդ

առարկայի վրա է լինում: Շատերը գիշերները
երկարկանի տներից իջնում եւ մի յար-
կանի տներում են գիշերում, կարծելով թէ
բարձր տները աւելի երկիւղալի են: Մասնաւոր
այստեղ լուր է պտտում, որ ամսիս 8-ին,
միւսնների կարծիքով 15-ին, լինելու են դետի
գօրեղ տատանումներ եւ մեզ էլ դժբաղդ Շա-
խախում վիճակին է ենթարկուել. մի քանիսն էլ
էֆիմերտէի գուշակութիւններից են վախճնում:
Այստեղ, մեզ մօտ, կայ մի շրջիկ խումբ, հայե-
րից բաղկացած, որի զբաղմունքը խմելը եւ
զուր խօսակցութիւններն են: Նրանք էլ իբր
թէ սարափելով դժբաղդ պատահարից, հա-
ւաքով են «բուխաններ» եւ կենդանի մնացած
զոհներին «էլ չը անեն» մաղթելով, դատար-
կում յիշերը, չը մտածելով անգամ, որ այդ յի-
շերին տուածով կարելի է մի քանի դժբաղդա-
ցածների վիճակը թեթեւացնել:

«Կաւմ» լրագրի թղթակիցը նկարագրում է
աղէտի հետեւեալ տեսարանները.

«Քանդված բաղնիսներից, որոնց թիւն է 12,
կարողացել են պեղումներ անել միայն եօթի
մէջ: Մահուղ-Աղայի մեծ բաղնիսում գտնվել
են կանանց 8 դիակներ, բայց, ինչպէս ասում
են տեղացիները, այդտեղ երկրաշարժի բռնկե-
նել են 30—40 կանայք: Բաղնիսի խորքում,
ուր առատադը ունի կամարների ձեւ, գտնված
է մի կենդանի կին: Այս բանը պատահեց փետր-
վարի 5-ին, ցերեկվայ 12 ժամին, երբ քաղա-
քում տարածվեց երկնայի լուր, թէ գտնվել է
կենդանի էակ: Այդ կնոջ անունն է Թաշիւ,
Իւզբէկի կնոջ: Նրա դուստր ջարդված է եւ ա-
կանջը պոկվել է: Նրա ծանօթ Յաթման ճա-
նաչեց նրան եւ ծածկեց իր չաղրայով: Միւս
բաղնիսում գտնվեց մի ուրիշ կենդանի կին,
Յաթման-Խանում անունով: Նրան ուշքի բերին
եւ նա սկսեց պտտել իր տեսածը: Բաղնիսում
30-ից աւել կանայք կային. յանկարծ միջեց,
պատերից թափվեց ծեփը եւ այդ ժամանակ ա-
մենք հասկացան, որ երկրաշարժ է եւ մնացին
յատակի վրա, սենեակի մէջ տեղը. նրանք եր-
կար ժամանակ արթնում մնացին եւ յետոյ ջուռն
մտան: Երբ Յաթման ջարթնեց, սաստիկ ծա-
րան էր: Ջուր չը կար, ջուրը դուրս էր թափ-
վել: Յաթման վերկացրեց միւսներին, ամենքը
խմել էին ուղում: Յետոյ նա տեսնում է (սա
անկասկած հալիւցինացիա էր), որ ներս է մտ-
նում մի մարդ եւ տալիս է նրանց ցուրտ ջուր
եւ հրաշալի խնձորներ: Դրանից յետոյ նա ոչինչ
չէ յիշում: Բայց Յաթմանի պատմութիւնն էլ
չը շարունակվեց, տասը բալէից յետոյ նա մե-
ռաւ:

Մինչեւ այժմ իշխանութիւնները փրկատա-
կի կանգնել են թաղի եւ գլխավորա-
պէս կանանց եւ երեխաների դիակներ: Պե-
ղումները բազմաթիւ, քաղաքային տեսքում մին-
չեւ հէնց վերջին ժամանակները անհարկն էին,
որովհետեւ այստեղ այրվում էին մանուֆակ-
տուրային խանութներ, մեծ քանակութեամբ
ճոթեր ծխում էին մինչեւ օրս, երբ ձիւն եկաւ
եւ անձրեւ էր մաղում ամբողջ օրը, իսկ երե-
կոյնան պատեց սաստիկ մառախուղ: Այստեղ,
հրդեհի ժամանակ, ինչպէս պատմում են, մէկ վա-
ճառական մինչեւ մէջը թաղվել էր եւ նա բոցերի
մէջ էր: Նրա աղաղակները եւ օգնութիւն կան-
ցին օգնութեան, բայց ոչ թիւր, ոչ էլ բրինձ
չը գտնվեցին ձեռքի տակ եւ ստիպվեցին ձեռ-
քերով ու դանակներով գործել: Նրան կիսայրված
դրութեան մէջ, վերջապէս, ազատեցին, բայց նրա
ոտները ջարդվել էին: Մէկ ուրիշ վաճառակա-
նի՝ Շատուրովի հետ, աւելի էլ մարափելի
դէպք պատահեց: Առաւօտեան հարուածի վայր-
կանին նա նստած էր մագաղիսում եւ կարո-
ղացաւ դուրս թռչել փողոցը, բայց յիշելով, որ
փողոցը թողել է խանութում, իսկոյն յետ
գնաց, դրամարկից հանելով 1,500 ր. հարեւ-
րութիւններ, նա վազեց դուրսը, բայց դռնե-
րում նրան վրա հասաւ երկրորդ հարուածը. նա
ճիւղեց փուլ եկող դռների տակ: Նրան գտան
թղթագրամներ ձեռքին: Նա թողեց ծերունի
հայր ու մայր:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին առա-
ջանք հետեւեալ նուիրատուութիւնները. 1) Ա.
Մէլիք-Աղաբեկից 100 ռուբլի, 2) 44 ռուբլի
20 կոպէկ՝ Ժողոված կոյս Հոփիսի մէջ Թա-
լիբեանի ձեռքով Թիֆլիսի կուսանաց մե-
նաստանի միաբանութեան քոյրերից՝ Ե. Աբա-
մէլիքեանից 10 ր., Հ. Թահիրեանից 10 ր., Մ.
Հօրիս-Մէլիքեան, Շ. Խաղաբեկի 5-ական ր.,
Ս. Անատունի, Ա. Խօջամիսեան, Ի. Էնֆիա-
նեան, Ե. Բերուշեան 2-ական ր., Հ. Մովսի-
սեան, Ե. Վարդանեան, Մ. Դօլմաբեկ 1-ական
ր., չորս դարուհիներից 1 ր., Կուսանաց պա-
ստորութիւնի Բ. Մանուկեան 2 ր., Փոքր Մագ-
դանից 20 կ. 3) Հ. Վարդաբեկից 5 ր., 4) Մ.
Մէլիք-Մկրտչեանից 1 ր., 5) Թ. Դանիէլեա-
նից 2 ռուբլի եւ 6) Գ. Վաչեանից 50 կոպէկ:
Ընդամենը 152 ռուբլի 70 կ., իսկ նախկին
գումարի հետ միասին 540 ր. 70 կոպէկ: Բա-
ցի սրանից ստացված են 12 զոյգ նոր կօշիկ-
ներ տիկին Եղիարեթ Սահակեանից եւ զա-
նազան հագնելիքներ պ. Յովհ. Խաղաբեկից:

Ա Ղ Է Տ Ի Շ Ր Զ Ա Ն Ի Ց (Նամակ Շահախուց)

Փետրվարի 7-ին

Անցեալ շաբաթ այստեղ պատահած աղետա-
լի երկրաշարժից կիսաւեր են դարձել հայաբնակ
հետեւեալ գիւղերը, որոնց ցանկի հետ աւե-
նորդ չեն համարում յայտնել նաեւ նրանց ծո-
խերի հաշիւը: Դրանք են—Ջարգեարան 160
ծուխ, Հընդար 126, Սաղեան 151, Բաշլիան
63, Գեարքան 200, Դեարա-Գարքան եւ Խա-
նիշեն 100, Արփուղ 30, Մէյսարի 80, Զար-
խու 21 եւ Գեաւաղի 190 ծուխ: Վերջինի
մասին պատմում են թէ՛ այնտեղ միայն մի
քանի տուն է կանգուն մնացել:

Հոգեւոր իշխանութեան ժողոված տեղեկու-
թիւններից երեւում է, որ այս գիւղերից Շա-
խախում գաւառին պատկանողների մէջ բարե-
բաղդաբար մարդկային զոհի միայն մի դէպք է
տեղի ունեցել: Գեաւաղի գիւղի մասին պատմ-
վում էր, թէ իբր այնտեղ մի հարսանիքում
տան փրկատակների տակ մնացել են շատ մար-
դիկ (մօտ 30 հոգի): Այս պարզվեց, որ դէպքը
տեղի է ունեցել Բաշլիան գիւղում եւ զոհերը
մօտ 15 հոգի էին: Առհասարակ գիւղերում
շատ անասուններ են փչացել, որոնց պատճա-
ռած զարհուրոթիւնից առաջնակից զանա-
զան հիւանդութիւնների առաջն առնելու հա-
մար, լաւ կը լինէր, որ առանձին ուղարու-
թիւն դարձնէին:

Սաղեանի ս. Ստեփանոս վանքի բակի մէջ-
տեղում եւ ուրիշ շատ տեղերում երկրի վրա
մեծ ձեղքվածներ են բացվել: Պատմում են, որ
մի քանիսի միջից մշուշանման գոլորշի էր
բարձրացել, շատ տեղ էլ ամբողջ սարեր են
միջից պտտվել ու փլուլել: Բայց Գարքեարան
գաւառամասում յայտնված (քաղաքի արեւե-
լեան ուղղութեամբ) հրաբուխից, մի տեղ էլ
երեւացել է Աստրախանկա (Ղըզ-Մէյսարի) գիւ-
ղի մօտ, բայց ոչ առաջինի պէս մեծ: Զեղքով
է Սաղեանի վանքի արեւելեան պատը եւ փլու-
լել են նոյն բակում գտնված հին շէնքերը.
իսկ վանահօր նոր շինված կաղարանը ձեղքուած-
ների է տուել: Վանքը անվտանգ է: Գեաւաղի
գիւղի եկեղեցու մի մասն է փլուլել: Մէյսարի
գիւղում բողբոջանների նորաբաց ուսումնա-
րանը փլուլել է, բարեբաղդաբար աշակերտների
արձակվելուց անմիջապէս յետոյ:

Թուրք գիւղերի մէջ նշանաւոր վնասվածներն
են Բաւալար, Գեաւաղ, Դարգահիւնալ, Զարնա
եւ մի քանի ուրիշները: Միւս թէ հայ եւ թէ
թուրք գիւղերում, համեմատած վերոյիշեալնե-
րի հետ, աւերումները մեծ չեն եղել:

Առհասարակ եղանակի լաւութիւնը երկրա-
շարժի ժամանակ շատերին փրկեց մահից նը-
րանով, որ մարդկանց բազմութիւնը անբնակ
չէ եղել: Տեղային եւ Բագուից եկած լուսա-
նկարիչները բազմաթիւ տեսարաններ են նկարել
աւերակներից:

Փետրվարի 12-ին Հոնդուրոս վասանդե
րկար եւ ծանր հիւանդութիւնից յետոյ, լո
րէֆֆէրէնը, որ մի ժամանակ նշանաւոր
աղաքի եւ արեւելեան հարցումս

կառուցանել ուսանողական ճաշարանների երեք յարկանի մի շինություն, 53,000 ռ. արժողությամբ, այդպիսով էլ կը լինի պարագայունքներ գտնելու բերք:

Նիտ-ԵՈՐԿ. «Կրթական» Վիճակը շոգե- նաւը հասաւ ժամը 11-ին:

Նիտ-ԵՈՐԿ. Կոյմայի գործարան- ների մի նաւային կարավան, բաղկացած հինգ շոգենաւերից եւ 26 բարձերից, անցնում է «Մագուլ» ընկերութեանը:

Մէլլանին Շապուհիով, որ սպանել էր իր հարազատ քրոջը, 12 տարեկան տաճանակիր աշ- խատանքներին է դատապարտւում:

Ձինւորական մանէթում տեղի ունեցաւ ձրի ներկայացում ի յիշատակ Գոգոյի. ներկայ էին մօտ 2000 մարդ:

Խմբագիր ԱԼԷԿՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴԻԿՈՎԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագումար թիֆլիսի հաշուով)

Արդ գնացք թիֆլիսից—Բագու շարաքը մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցե- րեկվալ 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու գիշերվալ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպէին):

Արդ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվալ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պետաւոր գնացք Բագուից դուրս է գալիս գիշերվալ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս երեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բագու առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպէին):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվալ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բագու երեկոյան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.):

Պետաւոր գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվալ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվալ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.):

Պետաւոր գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյան 10 ժ. (10 ժ. 58 ր.), հասնում է Կարս քաղաքի լիս առաւօտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրով 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվալ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պետաւոր գնացք Կարսից դուրս է գալիս ցե- րեկվալ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէք- սանդրով 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Կարս քաղ- լիս գիշերվալ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցե- րեկվալ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանա- հին ցերեկվալ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Կարս քաղ- լիս երեկոյան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Խառն գնացք Կարս քաղաքից դուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հա- նում է Սանահին ցերեկվալ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպէին):

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՕՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարատներով եւ էլեկտրական մե- ջոցաներով. մասնաւորապէս

ԲՅԻ, ՔՅԻ, ԱԿՍՆՁԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒ- ԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сегіевская ул., д. 12.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Օր. Սաքենիկ

ՅԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան ժամը 9—2

Երեկոյան ժամը 5—7

Վանքի մեծ փողոց, առաջ Մարտիրոսեանցի (Հ. Կ.) 40—60

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՅԻ ԿԻՐԱԿԻՐԵՐԻԳ՝ ԱՌԱՌՏՆԵՐԸ

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վիրաբու- թեան, վնասակար (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Ն. Մ. Ձիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և ներարդային:

Ն. Ի. Գրիկով—12—1 ժ. ականջի, բքի և կո- կորդի:

Զ. Բ. Բարաբասեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ս. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխայից:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբլիով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու:

Ս. Ն. Շալալովսկի—6—7 ժ. ներարդային (երեկ- տարայից), վնաս. և մորթու:

Գ. Ա. Թաթումեան—7—7/2 ժ. ներքին և երեխայից:

Բ. Ա. Նախասարգեան—7/2—8 ժ. Վճարը 50 կ. չբարձրեց ձրի Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Ս. Առվալանդի—տանը. ծաղկահատ և բը- ժըղական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԳՈՒՏՏԵՆԴԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՅՄԱՎՈՒՄ Ե

ՄԱՐԻԱ ԿՕՐԵԼԻ

«ՄԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

ՎԵՂԻԿ

Ուսանողներից թարգմ. Տ. Վ.

Արդիւնքը յատկացնում «Եղբայրական օգնու- թեան»:

Դիմել՝ Тифлисе. Книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. Галустьян, Лорисъ-Мели- ковская, № 11. 1—5

„ԶԳՈՍՄՈՒՆԵՐ“ ՄԷԶ

գետեկու համար, առանց բացառու- թեան (միւսներին ձեռք բերված են) կը խնդրէ հետեւեալ հեղինակներից իրանց լու- սապատկերները. Յ. Յովսէփան, Յ. Թումանեան, Շանթ, Սրինգ, Ս. Սալապեան, Արչ. Միլիթրեան, Չարդեան, Դեմիճեան, Դեմիճեան, Իսահակեան, Բալուզեան, Մա- նուէլեան, Աթայեան, Գ. Աստուածատրեան եւ Ն. Տէր-Գեորգեան:

Ուսանողների ընդունելութիւնը դեռ չա- բողովում է մի ամսով:

Տարեկան երկու չքեղ—պատկերազարդ գրքի բաժնեգինն է 3 րուբլի. Յղկու են Վե- նետիկ Միլիթրեաններին, իսկ ուսանողները եւ յանձնարարական նամակները—Շուրապէր՝ Գրիգոր Բալասան:

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՅՅ

մաղերը բուցնելու եւ ամրացնելու հա- մար, ոչնչացնում է թեփու Դուրս է եկել նաեւ բուրդովն նոր միջոց

ՁՈՒՒԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատ- ճառած սեւութիւնը, մուսները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ սրտակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մախլում են բոլոր պարֆիւմերական եւ զեղովածառական խանութներում: Գլխա- տը պահեստը գտնվում է Պետերբուր- գում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բը- նակարան № 2. պահեստի բաժանմունք- ները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկա- սեան գեղատնային ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Մի- ջայեան փողոց եւ Բագուում. նաեւ Մի- ջայեան կամուրջի վրա, Պոպովի եւ Ն- րիտակովի զեղատններում: Օտարադա- րացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով: 42—100

ՎՐԱՑ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ

2 օր եւ քաղաքի, փե տրվարի 13-ին ԴԵՐԱՍԱՆ Հ. ԱՄՕՆ

մասնակցութեամբ տեղական հայ դերասանա- կան խմբի անդամների, կը ներկայացնէ

„ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ“

Ողբերգ. 5 գործ. հեղ. Գուցկովի

Մասնակցում են—տ. Չարէլ, օր. Վարդուհի, պ. պ. Ա. Թ., Միքայելեան, Պարոն-Սաղաեան, Միքայելեան եւ ուրիշներ:

Սկիզբն է ճիշդ 8 ժամին երեկոյան:

Տոմարները վաճառվում են թատրոնի կա- սայում: Բացառապէս աշակերտների համար կուգան օթեւակները արժեն 60 կոպ. 1—2

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՆԱԽԻՆ ՈՒՍԱՆՈՂ

որոնում է դասեր կամ յարմարաւոր պարապ- մունքներ Դիմել գրաւոր կերպով՝ պօստ-ցրա- հանջ. Բ. Սուրցկին (На почту, до востребо- вания, Б. Сурцкому. 1—2

ԳՈՒՏՏԵՆԴԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

Վ ա ճ ա ո Վ ու ի ն

«Կիրակոս Պատմադիր», աշխատ. Ոսկան Տէր-Գեորգեանի—1 ր. «Միւստ պատմադիր» » 50 կ. «Յովհաննէս Կախկոպոս Շոհիստեանի կենսագրութիւնը», գրեց Արիստ. Կպ. Սեդրակեան— «Մամուլէ քահանայի Անդուլ հաւաքումը ի գրող պատմադրաց», Ար. Տէր-Միքայելեան—1 ր. «Պարզ քարոզներ ժողովրդի ընթերցանութեան համար», Էմ. ք. Նազարեանի 3 տետրակ.— «Բիւրօյի առակներ», Գ. արք. Ալվալեանի 80 կ. «Հայաստ. առաքել. ուղղափառ սր. եկեղեցին եւ իր օրը. կարգ», Ար. Տէր-Միքայելեանի—60 կ. «Միլիթար Գոյի դատաւանաւորը հայոց», իրաւաբանական հետազոտութիւններով, Վ. վա- Բաստամանցի—3 ր.

«Խորհնացու պատմութիւն», ուսումնասիրութիւն, Գ. Տէր-Միքայելեանի—35 կ. «Դատարարութիւն եւ ժողովութիւն», թարգմ. Ս. Մ.—60 կ. «Թէ ինչ է իստերիկան», թարգմ. Նաղիկեանի—40 կ. «Կինն իրեւ. օրիորդ», թարգմ. Նաղիկեանի—1 ր. 20 կ. «Յնց Ուրախ», վէպ, թարգմ. Մատինեանի—80 կ. «Մի մանկական հոգու պատմութիւն», վէպիկ, թարգմ. Տ. Վ.—1 ր.

«Կրքերը եւ նոցա աղքեցութիւնը առողջութեան վրա», Ա. Բաբայանի—80 կ. «Ճարերը ազգայնականութեան», Ի. Յարութեանեանի (թարգմ.)—50 կ. «Ազգայնագետի աղբիւրներից յիշատակ դատակնքայ Գորեա եւ Շմոնի վկայից, որ վկայի յուրա, Գ. Տէր-Միքայելեանի—50 կ.

«Նկարագրութիւն հոգեւորական վարոց Յովսէփոս օրդոյ թագաւորին հնդկաց, աշխատ. վարդ Տէր-Մովսէսեանի—70 կ. «Ս. Լուսաւորչի աջը», Կ. Կոստանեանցի—15 կ. «Տէր-Պետրոս Գետադարձ», Կ. Կոստանեանցի—10 կ.

«Պարթեւները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիւնները հայոց հետ», Ն. Բարամանի— «Դիմել՝ Тифлисе, Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустьян, Лорисъ-Ме- ковская ул., № 11. 8—8

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

XVIII ԴԱՐ

Յ. ա ա ջ ի ն մ ա ս

ԳԻՆԸ 1 ԲՈՒՐԼԻ 50 ԿՕՊԵԿ

Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը: Հասցեն՝ Тифлисе, Редакция Мшак «Գրատեսնէրէզ» գրականագիտութեան Հասցեն՝ Тифлисе, Книжный магазинъ „Гуттенберг“ Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինա- րը: Գինը 1 րուբլի 50 կոպէկ:

ԹԻՓԼԻՍԻ ՆԱԽԱՐԱՐԻՆԱՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒԹԻՒՆ

արանով յայտարարում է ի դիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ նշանակված է 80% վճարը սինքն քսան րուբլի (20 ր.) ամեն մի փային. վճարը ընդունվելու է Ընկերութեան գրասենե- կում մինչեւ փետրվարի 16-ը ամենայն օր ցերեկվալ ժամը 12-ից—2-ը (յ. 31, փ. 7, 12) 4—4

արտասահման գնալու պատճառով

ԾԱԽՎՈՒՄ Ե ՏՈՒՆ

Դիմել, Անդրեւսկի եւ Շերեմետեւսկի փողոցների անկիւնում, ամենայարմար տեղում միջին կան խմբիկի պաղով եւ խանութ. հարցնել տանտիրոջը (ու. կ. ե. հ. կ. ե.) 6—6

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Լ. ՏՕՒՏՕՑ.—«ՅԱՐՈՒԹԻՒՆ» (վէպ. արտադրած «Մուրճ» ամսագրից), թարգմ. Յովհաննէսեան, գ. 1 ր. 50 կ. (ճանապարհածախսով 1 ր. 75 կ.):

ԱԼ. ԴՕԴԵ.—«ՅԱՐՈՒՄ ՕԼ ԿՐՏՍԵՐ» եւ «ԻՒՍԼԻՐ ԱՒԱԳ» (վէպ. արտա- տպած «Մուրճ» ամսագրից) թարգմ. Տ. Յովհաննէսեան, գ. 1 ր. (ճանապարհ- ծախսով 1 ր. 25 կ.):

ԼԵՐՄՕՆՏՕՎ. «ԵՒԻՆ». թարգմ. Յ. Միքայելեանց. գ. 10 կ. (ճանապարհածախսով 20 կ.): Դիմել Տիգրան Յովհաննէսեանին՝ Тифлисе, Вельяминовская ул., д. 3, присяжному повѣренному Тиграчу Нерс. Иоаннисянц.